

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N «ՀՀ-ՏՄՂՀ-ԲՄԱՇԶԲ-21/01»

ք.Դիլիջան

« 02 » օգոստոսի 2021թ.

Դիլիջանի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավարի Ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտդիանշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Դիլիջան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 25.12.2021թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուի իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուի պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուի պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3650 օր (երեք հազար վեց հարյուր հիստոն օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուի պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:²⁷

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի

պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամիկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **352803000** (երեք հարյուր հիսուներկու միլիոն ութ հարյուր երեք հազար) ՀՀ դրամ, որից **58800500** (հիսունութ միլիոն ութ հարյուր հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին **70717800** (յոթանասուն միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որից **11786300** (տասնմեկ միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին **70390800** (յոթանասուն միլիոն երեք հարյուր ինսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որից **11731800** (տասնմեկ միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին **70445400** (յոթանասուն միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից **11740900** (տասնմեկ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար ինը հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին **70705200** (յոթանասուն միլիոն յոթ հարյուր հինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որից **11784200** (տասնմեկ միլիոն յոթ հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5-րդ չափաբաժին **70543800** (յոթանասուն միլիոն հինգ հարյուր քառասուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որից **11575300** (տասնմեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունը: Ներքին չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է՝ պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն, այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:³⁵

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Սյանիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402058011
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

«Արտդիանշին» ՍՊԸ
Արարատի մարզ, ք. Արարատ,
Գրբայեղովի 24
ՀՎՀՀ 04112378
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150000527187135

Համայնքի ղեկավարի ժ/պ Դ. Սարգսյան

Տնօրեն Ս. Խաչատրյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎ
**«Դիլիջան քաղաքի Գետափնյա 4 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքերի
վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացում»**
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /հազ. դրամ/	Ընդհանուր արժեքը /հազ. դրամ/
1	3	4	5	6	7
	Քանդման աշխատանքներ				
1	Պատերից գաջի սվաղի քանդում	մ ²	1250.00	0.300	375.000
2	Առաստաղներից գաջի սվաղի քանդում	մ ²	305.00	0.300	91.500
3	Փայտյա պատուհանների քանդում	մ ²	10.00	1.000	10.000
4	Դռների քանդում	մ ²	6.20	1.000	6.200
5	Արտաքին պատերից ց/ավազե սվաղի քանդում	մ ²	590.00	0.400	236.000
6	Արտաքին պատուհանագոգի թիթեղից քանդում L-150 մմ	մ ²	46.50	0.350	16.275
7	Տանիքի ծածկույթի քանդում կավարամածի հետ միասին	մ ²	380	0.300	114.000
8	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ ³	6.5	20.000	130.000
9	Զրիորդանների ապամոնտաժում ջրատար խողովակների և տախտակամածի հետ միասին	գմ	50.00	0.400	20.000
10	Խարամի շերտի քանդում	մ ³	73	2.500	182.500
11	Տանիքի ց/ավազե շերտի քանդում 50մմ հաստ.	մ ²	345	0.400	138.000
12	Շին աղբի դուրս բերում բարձրում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 4կմ	տն	242.000	1.500	363.000
	Ճարտ.շին. մաս				
	Բացվածքներ				
1	Մետապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում բացվող	մ ²	9.72	29.000	281.880
2	Բարդ փական	հատ	12.00	5.804	69.652
3	Մետապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում բացվող	մ ²	25.74	29.000	746.460
4	Մետապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում չբացվող	մ ²	5.85	19.000	111.150
5	Շվեցար /փական սարք/	հատ	13.00	11.000	143.000
6	Ալյումինե բլոկով, սպիտակ 60մմ հաստ.ջերմախզիչ միջուկով ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում	մ ²	6.20	83.000	514.600
	Հարդարման, ներկարարական, աշխատանքներ				
1	Շեպերի գաջի սվաղ	մ ²	16.00	4.500	72.000
2	Շեպերի ներկում լատեքսային ներկով լավ որակով համատարած մածկապատմամբ	մ ²	16.00	1.800	28.800
3	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ ²	1250.000	2.000	2500.000
4	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ ²	335.000	2.000	670.000
5	Պատերի ներկում լատեքսային ներկով, համատարած մածկապատմամբ, լավորակ	մ ²	500.00	1.800	900.000

6	Առաստաղների ներկում լատեքսային ներկով համատարած մածկապատմամբ, լավորակ	մ ²	335.00	1.800	603.000
7	Պատերի ներկում յուղային ներկով, համատարած մածկապատմամբ, լավորակ	մ ²	750.00	1.800	1350.000
Արտաքին աշխատանքներ					
1	Արտաքին պատուհանագոգերի տեղադրում 40մմ հաստ բազալտ սալերից b=200մմ	մ ²	62.00	14.000	868.000
2	Շեպերի գ/ավազե սվաղ	մ ²	80.00	3.897	311.797
3	Շեպերի ներկում ճակատային ներկով	մ ²	80.000	1.800	144.000
4	Արտաքին պատերի գ/ավազե սվաղ ցանցով $\Phi 3 \quad 50 \times 50$	մ ²	2250.00	3.500	7875.000
5	Արտաքին պատերի ճակատային ներկում, մածկապատմով	մ ²	2250.00	1.600	3600.000
6	30մմ հաստ. բազալտ սալերով որմնապատի երեսապատում	մ ²	45.000	17.000	765.000
7	40մմ հաստությամբ բազալտ գլխաթասերի տեղադրում b=40մմ,	մ ²	3.000	15.000	45.000
8	Արտաքին աշխատանքների համար տախտակամածի պատրաստում և քանդում	մ ²	2100.00	0.800	1680.000
Ջերմամեկուսացման աշխատանքներ					
1	Արտաքին պատերի ջերմամեկուսացում 100մմ հաստ էքսպուդացված փրփրապոլիստիրոլով, ներառյալ անկյունային դետալները 30-40կգ/մ ³ փոքր կամ հավասար 0.04 վտ/մ ² °C	մ ³	85.000	31.000	2635.000
2	Էքսպուդացված փրփրապոլիստիրոլի արժեքը	մ ²	1700.0	6.000	10200.000
3	Արտաքին պատերի ջերմամեկուսացում հանքաքամքակով 100մմ հաստ, ներառյալ անկյունային դետալները 100-150կգ/մ ³ փոքր կամ հավասար 0.04 վտ/մ ² °C	մ ³	27.500	142.000	3905.000
4	Պլաստմասե խցաբութակի արժեքը L=200մմ, 12-14մմ	հատ	14600.0	0.050	730.000
5	Արտաքին աշխատանքների համար տախտակամածի պատրաստում և քանդում	մ ²	2100.00	0.800	1680.000
6	Նկուղի առաստաղի և պատշգամբի տակի հատվածի ջերմամեկուսացում փրփրապլաստե սալերով 30մմ հաստ. և վերին շերտը ֆոլգայապատ ապակեբանբակ 50մմ խցաբութակի հետ միասին, ջերմահաղորդականության գործակիցը մինչև 0,04 վտ/մ.աստ ցելս. /886մ ² /	մ ³	33.600	32.000	1075.200
7	Փրփրապլաստի արժեքը	մ ²	420.00	0.800	336.000
8	Ֆոլգայապատ Ապակեբանբակի արժեքը	մ ²	420.00	0.500	210.000
9	Պլաստմասե խցաբութակի արժեքը L=150մմ, 12-14մմ	հատ	2730.0	0.050	136.500
Տանիքային աշխատանքներ					
1	Ջերմամեկուսիչ շերտի պատրաստում EPS նյութից 30-40	մ ²	345	5.300	1828.500
2	Ցեմենտե հարթեցնող շերտի պատրաստում 50մմ հաստությամբ $\Phi 5$ մմ ցանցով, 150x150մմ բջիջով	մ ²	345	3.100	1069.500
3	Թեթև բետոն B7,5 դասի բետոնից 80մմ	մ ³	27.6	33.000	910.800
4	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում 2 շերտ, վերին շերտը ավազապատիզոգամ	մ ²	345	4.000	1380.000
5	Պլաստմասե ձագարների տեղադրում $\Phi 150$ մմ	հատ	2	2.300	4.600
6	Ցինկապատ գործարանային ներկումով 0,5մմ հաստ. պարապետի գլխադիրների տեղադրում L=0,5մ լայնությամբ RAL3005	մ ²	37.5	5.500	206.250
7	Օդափոխության խորանների զոնտ 0,5մմ RALL	հատ	4	9.500	38.000
Այլ աշխատանքներ					
1	Պատշգամբների տակի սվաղ գ/ավազե շաղախով ցանցի վրա	մ ²	75.00	3.600	270.000

2	Պատշգամբների տակի ներկում ճակատային ներկով	մ²	75.00	1.600	120.000
3	Մետաղական բազրիքների և դարպասների յուղաներկում	տ	0.95	80.000	76.000
4	Տակիքի առկա ջրահեռացման խողովակների ապամոնտաժում Φ 150	գծմ	60.00	0.150	9.000
5	Ցինկապատ գործարանային ներկումով 0,5մմ հաստ Φ 150մմ ջրահեռացման խողովակների տեղադրում	կ-տ	2.0	* 125.000	250.000
6	Պեմզաբլոկե հորանի կտրում Φ րեզով 300 մմ լայն	մ²	18.00	1.300	23.400
7	Հորանի շար 100 մմ բլոկներով	մ³	1.80	28.000	50.400
8	Φ 20 գազատար խողովակի ապամոնտաժում	գծմ	40.0	0.200	8.000
Էլեկտրատեխնիկական աշխատանքներ					
1	ԼԵՂ լուսատու հակավանդալային, շարժման և լուսավորության տվիչներով, գիշեր- ցերեկ ,8Վտ, 4000-4500K, 700Lm	հատ	45	9.000	405.000
2	ԼԵՂ լուսատու հակավանդալային, շարժման և լուսավորության տվիչներով, գիշեր- ցերեկ, 11Վտ, 4000-4500K, 1070Lm	հատ	19	10.000	190.000
3	Պլաստիկ երկտեղանոց տուփ, IP 40, մալուխային խցուկներով, արտաքին տեղադրման	հատ	1	0.200	0.200
4	Փոփոխական հոսանքի ավտոմատ անջատիչ 2Px16Ա	հատ	1	4.07694	4.07694
5	Հողանցման հաղորդաձող	հատ	1	2.500	2.500
6	Բաժանման տուփ IP45, 100x100x60մմ մալուխային խցուկներով/	հատ	18	0.100	1.800
7	BBF ₁₇ 3x2.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով, մեկուսացված մալուխի անցկացում	գմ	20	0.700	14.000
8	BBF ₁₇ 3x1.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով, մեկուսացված մալուխի անցկացում	գմ	365	0.450	164.250
9	ՊՎՔ տուփախողովակ 25x16մմ	գմ	345	0.450	155.250
10	ՊՎՔ խողովակ Φ 20մմ	գմ	20	0.350	7.000
11	Միջհարկային ծածկի մեջ անցքի բացում	հատ	18	0.400	7.200
12	Անցքերի լցվակում	հատ	18	0.900	16.200
13	Ճարմանդներ	հատ	500	0.020	10.000
Ընդամենը					53091.441
Շահույթ 11%					5840.059
Ընդամենը					58931.500
ԱԱՀ 20%					11786.300
Ընդամենը					70717.800

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Դիլիջան Գետափնյա 4 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
 ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
 ՀՎՀՀ 07618909
 ՀՀ 900402058011
 ՀՀ ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն

Համայնքի ղեկավարի ժ/պ Դ. Սարգսյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտդիանշին» ՍՊԸ
 Արարատի մարզ, ք. Արարատ,
 Գրքայեղովի 24
 ՀՎՀՀ 04112378
 «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
 ՀՀ 1150000527187135

Տնօրեն Մ. Խաչատրյան


 /ստորագրություն/
 Կ.Տ



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Դիլիջան քաղաքի Գետափնյա 6 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքերի
վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Սկզբնական	Միավորի արժեքը /հազ. դրամ/	Ընդհանուր արժեքը /հազ. դրամ/
1	3	4	5	6	7
	Քանդման աշխատանքներ				
1	Պատերից գաջի սվաղի քանդում	մ ²	1250.00	0.300	375.000
2	Առաստաղներից գաջի սվաղի քանդում	մ ²	305.00	0.300	91.500
3	Փայտյա պատուհանների քանդում	մ ²	10.00	1.000	10.000
4	Դռների քանդում	մ ²	6.20	1.000	6.200
5	Արտաքին պատերից ց/ավազե սվաղի քանդում	մ ²	580.00	0.400	232.000
6	Արտաքին պատուհանագոգի թիթեղից քանդում L-150 մմ	մ ²	46.50	0.350	16.275
7	Տանիքի ծածկույթի քանդում կավարամածի հետ միասին	մ ²	380	0.300	114.000
8	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ ³	6.5	20.000	130.000
9	Ջրհորդանների ապամոնտաժում ջրատար խողովակների և տախտակամածի հետ միասին	գմ	50.00	0.400	20.000
10	Խարամի շերտի քանդում	մ ³	73	2.500	182.500
11	Տանիքի ց/ավազե շերտի քանդում 50մմ հաստ.	մ ²	345	0.400	138.000
12	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 4կմ	տն	242.000	1.500	363.000
	Ճարտ.շին. մաս				
	Բացվածքներ				
1	Մետապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում բացվող	մ ²	9.72	29.000	281.880
2	Բարդ փական	հատ	12.00	5.804	69.652
3	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում բացվող	մ ²	25.74	29.000	746.460
4	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում չբացվող	մ ²	5.85	19.000	111.150
5	Շվեցար /փակման սարք/	հատ	13.00	11.000	143.000
6	Այլումինե բլոկով, սպիտակ 60մմ հաստ.ջերմախզիչ միջուկով ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում	մ ²	6.20	83.000	514.600

Հարդարման, ներկարարական, աշխատանքներ					
1	Շեպերի գաջի սվաղ	մ ²	16.00	4.500	72.000
2	Շեպերի ներկում լատեքսային ներկով լավ որակով համատարած մածկապատմամբ	մ ²	16.00	1.800	28.800
3	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ ²	1250.000	2.000	2500.000
4	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ ²	335.000	2.000	670.000
5	Պատերի ներկում լատեքսային ներկով, համատարած մածկապատմամբ, լավորակ	մ ²	500.00	1.800	900.000
6	Առաստաղների ներկում լատեքսային ներկով համատարած մածկապատմամբ, լավորակ	մ ²	335.00	1.800	603.000
7	Պատերի ներկում յուղային ներկով, համատարած մածկապատմամբ, լավորակ	մ ²	750.00	1.800	1350.000
Արտաքին աշխատանքներ					
1	Արտաքին պատուհանագոգերի տեղադրում 40մմ հաստ բազալտե սալերից b=200մմ	մ ²	62.00	14.000	868.000
2	Շեպերի գ/ավազե սվաղ	մ ²	82.00	3.897	319.592
3	Շեպերի ներկում ճակատային ներկով	մ ²	82.000	1.800	147.600
4	Արտաքին պատերի գ/ավազե սվաղ ցանցով Ф3 50*50	մ ²	2230.00	3.500	7805.000
5	Արտաքին պատերի ճակատային ներկում, մածկապատումով	մ ²	2230.00	1.600	3568.000
6	30մմ հաստ. բազալտե սալերով որմնապատի երեսապատում	մ ²	45.000	17.000	765.000
7	40մմ հաստությամբ բազալտե գլխաթասերի տեղադրում b=40մմ,	մ ²	3.000	15.000	45.000
8	Արտաքին աշխատանքների համար տախտակամածի պատրաստում և քանդում	մ ²	2100.00	0.800	1680.000
Ջերմամեկուսացման աշխատանքներ					
